

հայերէն կարգաւ ու գրել չը գիտէին: Բայց բա-
րեգործական ընկերութեան խորհրդի անդամները
ոչ փոխափայտութիւն պէտք է անեն, ոչ էլ
գրքեր խմբագրեն: Ազնիւ, խելացի, եռանդոտ
ազմինիստրատոր լինելու համար շատ անգամ
համալսարանական ուսումը չէ օգնում: Բոլոր ժո-
ղովելու, կարգադրութիւններ անելու, պրօպա-
գանդաւ անելու մէջ ոչ—համալսարանականներից
երեք չորս հոգի, որոնք մտել են ընկերութեան
խորհրդի մէջ, կարող են մեծ օգնութիւն տալ
ընկերութեանը իրանց կապիտալի դիրքով, իրանց
կապերով, իրանց մասնաւոր գործերը վարելու
մէջ նրանք ցոյց տուցին թէ վատ ազմինիստ-
րատորներ չեն, թող նոյն եռանդը և ընդունա-
կութիւնը գործ դնեն և ընդհանուր, ազգային
գործին ծառայելով և հասարակութիւնը նրանց
չափ չնորհակալ կը լինի: Իսկ եթէ ուսում լրաց-
րի յօդուածագրի ամբողջ յայտը մեր ամեն հա-
սարակական գործերում համալսարանականների
միտ է, դարձեալ նա զո՛ւ պէտք է լինի ընտրու-
թիւններից, որովհետեւ մեծամասնութիւնը, չինք
թէ վեց հոգի ընտրված ինն անդամներից, դար-
ձեալ բուն համալսարանականներն են:

Յայտնում ենք (Մշակի) ընթերցողներին Հա-
լարարում, որ մեր լրագիրը հատով է ծախվում
Հալարարում, պ. կարապետ Ղազանջեան կօն-
դիտերի խանութում:

Շնորհակալութեամբ ստացանք պ. Ա. Քալան-
թարի հեղինակութիւնը աւստրիական լեզուով Ռու-
սաստանի տաւաբապահութեան մասին:
Այդ գիրքատեսական հետազոտութիւնը, որ
տպված է ներկայ 1881 թ.ին Ս. Պետերբուրգ-
ում, կրում է հետեւեալ վերնագիրը. «Русский
скотъ, сравнительный очеркъ условий русскаго
скотоводства.» А. Калантара. Այդ գրքի մա-
սին, որ բաղկացած է 74 երեսից, կաշիստեղծ
խօսել մի այլ անգամ:

Մեզ գրում են Ի. Գ. Ի. Ի. «Այս ամսի 14-ին
այստեղի ուսումնարանի դահլիճում գրականա-
կան երեկոյ եղաւ: Բայց զմեզ հապաւնեցաւ
հասարակութիւնը բաղկացած էր 8 հոգուց:»
Թղթակիցը զանգաւում է այդ անտարբերու-
թեան վրա իր գիրքների կողմից, բայց մենք
կարծում ենք որ ամեն սկզբնաւորութիւնը միշտ
դժուար և դանդաղ է լինում և մի գործ սկսող-
ները չը պէտք է յուսահատվեն և պէտք է շա-
րունակեն տոկոսութեամբ իրանց ձեռնարկած
գործը:

ՄՈՍԿՎԱՅԻՆ պ. Դ. Ի. իւրաքանչեւ մեզ գրում
է. «Անցեալ օր ստացայ Շուշուց այն բզէզների
մի քանի օրինակներ, որոնք երեքնայն այս և
անցեալ տարի Անգլիոյկաթի դաշտերում: Յայ-
տնում է որ այդ բզէզները իսկ և իսկ «Ani-
soplia austriaca» անուանված բզէզներ են:
որոնց համար (Մշակի) մէջ արդէն մի բանասի-
րական էի տպած: Միջատներից առաջացած այս
տարվայ ձեռքը 5000 ր. գումարի են գնահա-
տում:»

Մեզ գրում են ՆՈՒՍԻՍԻՆ, որ այդտեղի Աս-
տուածանի եկեղեցու գանձապետ Մարտիրոս
Մարգարեանց, որ մի աշխոյժ և եռանդոտ ծե-
րունի է, իր գանձապահութեան ժամանակ մօտ
12.000 ռուբլ յետ է զցել եկեղեցու համար: Բայց
լաւ կը լինէր, աւելացնում է Թղթակիցը, որ
պարոնը, այնու ամենայնիւ, իւրաքանչեւ տարի
բոլոր արդիւնքի և ծախքի հաշիւը կատարելա-
պէս հրապարակօրէն ներկայացնէր ժողովրդին,
որով և կազատվէր մի քանի բամբասանքնե-
րից:

Մեզ հաղորդում են որ Հալարարի Էլմիած-
նեցոց եկեղեցու երեսփոխան ընտրվեցաւ պ.
կարապետ Թէմուրազեանց, բայց չնորոգ մի
քանի անձանց որա ընտրութեան մէջ են խո-
չընդոտներ գտնվեցան և զրա հաստատութեան
գործը ուշացնում են: Խոչընդոտներից մինն է
մանաւանդ Գեորգ աւագ քահանայ Թէմուրա-
զեանց և մի քանիսն, որոնք անձնական հաշի-
ւունքներով նոր երեսփոխանի հետ, համազում են
կօնստանդարտին չը հաստատել Թէմուրազեան-
ցին, չը նայելով որ ժողովուրդը նրան մեծ հա-
մակութիւն է ցոյց տալիս:

Լուսմ ենք որ նոր հիմնված հայոց բարեգոր-
ծական ընկերութեան խորհուրդը առանձին
նիստ է ունեցել երեք օր առաջ և ընտրել է
խորհրդի նախագահ Ալէքսանդր Անանովին, իսկ
փոխ-նախագահ զինեալ Տէր-Ասատուրովին:
Կատարելապէս համակրում ենք այդ ընտրու-
թիւններին: Մենք քայլ առ քայլ կը հետեւնք
ընկերութեան գործունէութեանը և միշտ ան-
կեղծ կերպով կը համակրենք նրա օրինաւոր
գործերին և անխնայ կը հարուածենք եթէ նկա-
տենք նրա մէջ տգէղ երեւոյթներ:

Տպում ենք ներկայ համարում միաց (Կրօնքա-
լրագիր) մի յօդուած հայոց բարեգործական ըն-
կերութեան մասին: Մենք գտնում ենք չափա-
զանց զովաբանութիւն այդ յօդուածի մէջ հայե-
րի վերաբերմամբ: Աստուած տայ որ մենք սը-
խալված լինենք, բայց, որքան ճանաչում ենք
հայերին, չի անցնի կարծ ժամանակ և ընկերու-
թեան խորհրդի մէջ կը սկսվեն ինտրիգանք: Եւ
այլ տգէղ երեւոյթներ: Հայերից ամեն միւր
կարծում է թէ ինքն է միայն տեղեկագործու-
թեան կատարելութիւնը: Հայը իր եւսը ամեն
ազգային գործերից և շահերից վեր է դասում
և պատրաստ է կործանել ամբողջ ազգը իր եսը
պահպանելու համար: Արդէն ընդհանուր ժողով-
ների մէջ հիմնողները սկսեցին անսխա-
լական ու թեան հակումներ ցոյց տալ: Աս-
տուած տայ որ հայի զգուշի եսը կրկին երևան
չը գայ և այդ օգտակար հիմնարկութեան մէջ:
(Մշակը) համաձայն չէ վրաց լրագրի գովասանք-
ների հետ և մենք միշտ արթուն կը մնանք
ամեն մի քայլի մասին որ կանի նոր ընկերու-
թիւնը:

Միջանցիկ մի հատ Գեորգեանի Փօթօգրա-
ֆիական ժողովածուներից ազուլեցի պ. Մար-
գար ֆանեանցի վրա և ստացանք նրանից 20
րուբլ:

Ստացանք Կ. Պոլսից մի տպված յայտարար-
ութիւն Լոնդոնում հրատարակելի «The Ori-
ental Gazette» լրագրի, որ յանձն է առնում պաշտ-
պանել հայոց դատը: Նրա խմբագիրը էլ մասնա-
ւոր նամակ ստացանք, կը խօսենք այդ մա-
սին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԻՄՆՈՒՄ

Լրագիրները հաղորդում են հետեւեալ
տեղեկութիւնները Ֆրանսիական նոր մի-
նիստների անձնաւորութեան և անցեալ
գործունէութեան մասին:

Պատմաբան արտաքին գործերի մինիստրի
օգնական նշանակեց իր հաւատարիմ բարե-
կամ և աշխատակից Սպիլլէրին: Իրաւա-
բան և հրապարակախօս Եւգենի Սպիլլէր
1870 թ.ականի հոկտեմբերի 7-ին Գամ-
բետայի հետ օղակապով դուրս եկաւ
Փարիզից և եռանդով մասնակցեց ժողո-
վրդական պաշտպանութեան գործին Գեր-
մանիայի դէմ Տուրի և Բորգօի մէջ: 1871
թ.ականին Սպիլլէր Գամբետայի օգնու-
թեամբ հիմնեց «République Française»
լրագիրը և մի քանի տարի շարունակ այդ
լրագրի գլխաւոր խմբագիրն էր: 1876
թ.ականին նա պատգամաւոր ընտրվեցաւ:
Պատգամաւորների ժողովի մէջ նա նշանակ-
վեցաւ արտաքին գործերի մինիստրութեան
բնագծերը քննող մասնագործի զեկուցա-
նող և այդ պաշտօնի մէջ ցոյց տուց, որ
ինքը շատ լաւ ծանօթ է արտաքին քա-
ղաքականութեան հետ: Ֆրանսիների մի-
նիստը Ալէք. Տարբէ է նշանակեց իրաւա-
բան է: Նա ծնվել է 1832 թ.ականին
Անտերի մէջ և կայսերութեան ժամանակ
պրօֆեսորի օգնականի պաշտօն էր վարում:
այդ քաղաքում 1864 թ.ականին նա
հրապարակեց իր պաշտօնից, միացաւ ընդ-

դիմադրական կուսակցութեան հետ և
սկսեց լրագիրներին աշխատակցել: 1870
թ.ականին նա Լուարայի գաւառի պրե-
ֆեկտ նշանակվեց և մասնակցեց ժողովր-
դական պաշտպանութեանը, վարելով արեւ-
մտեան զօրքերի զործակատարի պաշտօնը:
Իրիւ հրապարակախօս Ալէք. Տարբէ պա-
րապում էր ֆրանսական հարցերով: Նոր
մինիստրութեան մէջ ամենանշանաւոր անձ-
նաւորութիւնը ժողովրդական լուսաւորու-
թեան մինիստր Պոլ Բերնէ է համարվում:
Նա աւելի յայտնի է իրիւ ֆիզիոլոգ, քան
թէ իրիւ քաղաքական գործիչ: Պոլ Բեր-
նէ զիտական կրթութիւնը ստացաւ Փա-
րիզի մէջ, որտեղ 1863 թ.ականին նա
ստացաւ բժշկութեան և բնական գիտու-
թիւնների դոկտորի աստիճանը: 1867 թ.ա-
կանին նա Բորգօի համալսարանի բժշկա-
կան բաժնի պրօֆէսորի աստիճանը ստացաւ
և, երբ յայտնի եղաւ իր գիտական աշ-
խատանքներով, նա հրաւիրվեցաւ Փարիզ
տեղական համալսարանի բժշկական բաժնի
ֆիզիոլոգիայի պրօֆէսորի պաշտօնով: Պոլ
Բերնէ գործունէութիւնը քաղաքական տա-
պաւիթի վրա սկսվեցաւ 1870 թ. սեպտեմ-
բերի 4-ին: Նա նշանակվեցաւ Եսենա գա-
ւառի պրեֆեկտուրայի գլխաւոր քարտու-
ղար: 1874 թ.ականին նոյն իսկ այդ գա-
ւառը նրան իր պատգամաւոր ընտրեց: Պոլ
Բերնէ պատկանում էր «հանրապետական մի-
նիստ» կուսակցութեանը: Նա շատ նը-
պասեց ժողովրդական կրթութեան վերա-
բերեալ հարցերի մշակութեանը: Նա մաս-
նակցել է այդ հարցի քննութեան համար
նշանակված բոլոր մասնագործներին և մեծ
ծառայութիւն է մատուցել ժողովրդական
կրթութեան գործին: 1876 թ.ականին
նա անգամ նշանակվեցաւ պատմական աշ-
խատանքների մասնագործի, բազմաթիւ
գիտական ընկերութիւնների անդամ ընտր-
վեցաւ և Կլոդ Բերնարի տեղ բիօլոգիական
ընկերութեան նախագահ ընտրվեցաւ: Պոլ
Բերնէ բազմաթիւ աշխատութիւններ է հրա-
պարակել անատոմիայի և ֆիզիոլոգիայի
վերաբերութեամբ և ի միջի այլոց կառավա-
րում էր «République Française» լրագրի
գիտական բաժնին: Ժողովրդական լուսա-
ւորութեան մինիստրի պաշտօնը Պոլ Բերնէ
յանձնելը քաղաքական մեծ նշանակու-
թիւն ունի, որովհետեւ նա կղերականութեան
ոխերիմ թշնամի է համարվում: Արդիւնա-
բերութեան և գեղարուեստների մինիստրու-
թիւնը յանձնված է Անտօնին Պրույին:
1870 թ.ականի պատերազմի ժամանակ
Պրու Գամբետայի քարտուղարն էր և
այնուհետեւ մտաւ «République Française»
լրագրի խմբագրութիւնը: Կոն 1866
թ.ականին Պրու պարլամենտի անդամ էր
և պատկանում էր հանրապետական միու-
թեան կուսակցութեան ձախ կողմին: Նա
առհասարակ պարապել է գեղարուեստա-
կան և գրականական կրիտիկայով: Հասա-
րակական աշխատանքների մինիստր Բայնալ
շատ քիչ յայտնի է: Նա հրէական կրօնին
է պատկանում և մինչև այժմ վարել է մի-
նիստի օգնականի պաշտօնը: Պատերազ-
մական մինիստր Կամպենիօն 1851 թ.ա-
կանի յեղափոխութեան ժամանակ հասա-
րակ օֆիցեր էր: Նա պալէտ III նրան աք-
սորեց Ֆրանսիայից: Այնուհետեւ նա ծա-
ռայել է Ալժիրայի մէջ: Ֆրանս-գերմանա-
կան պատերազմի ժամանակ նա Մեցի մէջ
պաշարված զօրքերի մէջ էր: Այնտեղ նա
վիրաւորվեցաւ և գերի տարվեցաւ Պ. Տո-
վային մինիստր Գուշար հրաժարված նա-
ւապետ է: Նա մասնակցել Սեփասթօպոլի
պաշարմանը, իսկ 1870 թ. պատերազմի

ժամանակ Լուարայի զօրքերի հրամանա-
տարն էր և պատերազմել է Մօնսի մօտ:

ԳԵՐՄԱՆԻԱ

Նոյեմբերի 15-ին իշխան Բիսմարկ մի
ճաշկերպի տուեց միացեալ խորհրդի ան-
դամներին և այդ ժամանակ քաղաքական
մի քանի յայտնութիւններ արաւ: Ի միջի
այլոց իշխանը ասաց, որ նա մտադիր է
նորիցը առաջարկել պարլամենտին իր օրի-
նադիւր սահմանադրութիւնը վերաքննելու
մասին: Բայց այս անգամ նա զիջում է
անուամբ պահանջելով, որ բնագիտը հաս-
տատվի երկու տարվայ համար. նա համա-
ձայն է իւրաքանչիւր տարի գումարել լայն-
ստազը: Այդ զիջումի մասին նա հեղու-
թեամբ նկատեց, որ այլապէս պարլամենտի
անդամները անգործ կը մնային: Մի քանի
նկատողութիւններ անելով պարլամենտի և
մամուլի ազդեցութեան մասին, նա խօսեց
պարլամենտական նոր մինիստրութեան մա-
սին: Ֆրանսիայի մէջ, որի անդամներից մի
քանիսը մամուլի ներկայացուցիչներ են:
Իշխան Բիսմարկ յիշեց, որ Գամբետա ծը-
մարիտ եղել է Գերմանիայի մէջ, անցել է
վարցիների մօտ, զուգէ կամեցել է այցելիլ
իրան, բայց երեւի նրա բարեկամները ըզ-
գուշացրել են Գամբետային, որ այդ այ-
ցելութիւնը վատ տպաւորութիւն կը գոր-
ծի Ֆրանսիայի մէջ և այդ պատճառով
Գամբետա չայցելեց Բիսմարկին: Այնու-
հետեւ իշխան Բիսմարկ սկսեց դարձեալ
գերմանական ներքին գործերի մասին խօ-
սել: Նա գաւառութեամբ խօսում էր Մօն-
զենի մասին, որ նրան իրր թէ անիրաւացի
նախատինքներ է անում: Բիսմարկ յետագի-
մական չէ և չէ ձգտում աւատական նպա-
տակներին: Խօսելով վերջին ընտրութիւն-
ներից ստեղծված գործերի գրութեան մա-
սին, իշխան Բիսմարկ ասաց. «Տարաբաղա-
բար պէտք է ես պահեմ իմ սիրելի նա-
խագծերից մի քանիսը: Եթէ մինչև ան-
գամ այն չըջանան, ուր մշակ դառն
մեծամասնութիւն է կազմում, ընտրու-
թիւնները իմ դէմ էին, ուրեմն իմ նախա-
դիմները մեղքովում են մինչև անգամ այն
մարդկերանից, որոնց մասին հոգեբը
տաքացնում են իմ ծերութիւնը: Եթէ չը-
րանք զո՛ւ են իրանց դրութեանց, թող այդ-
պէս էլ մնան: Ուժով բարեարարութիւն չէ
կարելի անել: Ես ձանձրացայ յետ միջի
այն հարուածները, որոնց նպատակ եմ
զարձել, աւելացրեց նա, և ուրախութեամբ
կը յանձնէի ուրիշին ներքին հոգեբը, եթէ
գտնվէր այդպիսի մէկը, որ կարողանար
պարլամենտական մեծամասնութիւն կազ-
մել: Իշխան Բիսմարկ իր համար փոխանորդ
կընտրի կամ կենտրոնական կամ ազատ-
միտ կուսակցութեան անդամներից մէկին:
Լեոդները այնպէս հասկացան, որ նա օ-
գուտ կը քաղի պետական կանցլերին փո-
խարնութեան մասին օրէնքից: Խօսում են,
որ գերմանական ներքին գործերը կարող
են յանձնված լինել Ֆրանկենշտէյնին, Բեն-
նիգսենին կամ Ֆորկենբէլին: Իշխանի վր-
ջին խօսքերի մէջ կարելի էր հեղուկութիւն
նկատել, միայն ընդհանուր տպաւորութիւնը
այն էր, որ զրականապէս էր խօսում է
ցոյց էր տալիս, թէ ինքը հպատակվում է
իր վիճակին: Բիսմարկ ի միջի այլոց նկա-
տեց, թէ զաշտերը և անատոմները
վաղուց զրուում են, բայց նա չէ կարող
միայնակ թողնել ծերունի կայսրին: Ե-
րեք տարի սրանից առաջ, շարունակեց նա,
ես ինձ հարց առաջարկեցի: Թէ իմ գոր-